Ֆելիքս Մովսիսյան

XIX ԴԱՐԻ ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ՄԱՍՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր. մասոնություն, Զմյուռնիա, «Հոմեր», «Տիգրան», օթյակ, բարեփոխում, թանզիմաթ, ազգային գործիչներ, հրապարակախոսներ, մտավորականներ, վաճառականներ:

Օսմանյան կայսրությունում ապրող հայության առաջին առնչությունները մասոնության հետ բավական վաղեմի պատմություն ունեն և վերաբերում են 18-րդ դարի առաջին կեսին: 1738 թ. մայիսին Կ. Պոլսից ստացված մի նամակի հիման վրա Լոնդոնում լույս տեսնող «St. Jame´s Evening Post» թերթը գրում է, որ առաջին մասոնական օթյակները, մինչև Կ. Պոլսում ստեղծվելը, միմյանց հաջորդելով հիմնվել են Զմյուռնիայում և Հալեպում[1]: 18-րդ դարի առաջին կեսում Օսմանյան կայսրությունում հայերի և հույների շրջանում մասոնության տարածման մասին տեղեկություն է տալիս նաև ֆրանսիացի հոգևորական Անթուան Ռաբբան՝ Արևելքում քրիստոնեության պատմության վերաբերյալ իր աշխատությունում[2]: Նա գրում է, որ 1748 թ. փետրվարի 3-ին Կ. Պոլսում անգլիայի մի քանի վաճառականներ մասոնական օթյակ ստեղծեցին, որի հավաքատեղին Բերայում գտնվող անգլիական դեսպանատան թարգմանի տունն էր[3]: Տեղեկանալով այդ մասին՝ Հռոմի պապ Բենեդիկտոս XIV-ը (1675-1758) հրահանգեց Կարկենդոնի արքեպիսկոպոսին՝ Ֆրանսիայի դեսպան Ռոլան դը Ալլեորիի միջոցով արգելել ազատ որմնադիրների հավաքույթները: Չցանկանալով Թուրքիայի հետ հարաբերությունները բարդացնել՝ դեսպանը մասոնություն տարածող դը՛ Պալոնին առաջարկեց անմիջապես լքել Կ. Պոլիսը: Միաժամանակ նա Զմյուռնիայում ֆրանսիական հյուպատոս Շառլ-Քլոտ դ՛ Բեյսոնելիին հրահանգեց՝ արգելել ֆրանսիացի վաճառականներին մասնակցել տեղի օթյակի հավաքույթներին: Դեսպանի համոզմամբ՝ ծայր աստիճան «սնահավատ, վախկոտ և դյուրահավան» թուրքերն իրականում անհանգստացած են, որ մասոններն «իրենց կախարդական հնարքներով կրնան Սուլթանը գահընկեց անել»[4]: Ֆրանսիայի ծովային նախարար մասոն Ժան Ֆրեդերիկ Մորեպան (1701-1781) դեսպան դ՛ Ալլեորին 1748թ. մայիսի 28-ին հղած նամակում հավանություն տվեց նրա գործողություններին: Նա գտնում էր, որ Թուրքիայի նման երկրում ազատ որմնադիրների գաղափարները տարածելը դեռևս վաղաժամ է, որտեղ ոչ միայն «այս կարգի նորությունները», այլև նույնիսկ եվրոպացի մասոնների գործունեությունն է դիտարկվում որպես վտանգ «երկրի ներքին անդորրության համար»[5]:

Կ. Պոլսի այս օթյակի վավերական լինելը կասկածի տակ է դնում արևմտահայ բարձրաստիճան մասոն Արմենակ Ֆեներճյանը[6]: Ըստ նրա՝ Կ. Պոլսի օթյակը կանոնավոր չի եղել, քանի որ խոսքը գնում է անգլիական օթյակում ֆրանսիացի մասոն դ՛Պալոնի գործունեության մասին: Նրա կարծիքով՝ մինչև 1856թ. Թուրքիայում «որևէ կանոնա-

---

Հոդվածը ներկայացվել է 12.03.2019 թ., գրախոսվել է 16.05.2019 թ., ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:

[1] Տե՛ս Պէյլէրեան Ա., Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանյան կայսրութիւն եւ Պոլսոյ Հայկական «Սեր» օթյակը ԺԹ դարուն, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրութ, 2001, էջ 144:

[2] Տե՛ս Rabbath Antoine, Documents inédits concernant l'histoire du christianise en Oreint (XVI-XIX s,), Vol. I, Paris, 1905.

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 134-136:

[4] Պէրպէրեան Հ., Առաջին ազատ-որմնադիրները Պոլսոյ եւ Զմյիւռնիոյ մէջ, «Կեանք եւ Արուեստ», Փարիզ, 1936, փետրվար, թիվ 2, էջ 41-43, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 144-145:

[5] Պէրպէրեան Հ., նշվ. աշխ., էջ 43:

[6] Ա. Ֆեներճյանը Կ. Պոլսում գործող «La Turguie» (Թուրքիա») թիվ 1049 ֆրանսախոս օթյակի քարտուղարն էր և 1918 թ. դեկտեմբերի 4-ին հիմնված հայկական «Հայաստան» թիվ 1185 օթյակի հիմնադիրներից մեկը: Նա այս օթյակի քարտուղարն էր, իսկ ավելի ուշ՝ Գերհարգելի Վարպետը: Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», Փարիզ, 1935, էջ 80, «Հայրենիք», Բոստոն, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 94-98:

ւոր Ազատ Որմնադրական Օթյակ գոյութիւն չէ ունեցած»[1]: Ա. Ռաբբայի աշխատությունում խոսվում է 18-րդ դարի առաջին կեսում Կ. Պոլսում, Զմյուռնիայում և Հալեպում եվրոպացիների կողմից հիմնված ազատ որմնադիրների օթյակների մասին, որը չի նշանակում, թե կանոնավոր մասոնությունը Օսմանյան կայսրության քրիստոնյաների շրջանում տարածում գտավ հատկապես այդ ժամանակաշրջանում: Դա տեղի ունեցավ մի փոքր ուշ՝ 18-րդ դարի երկրորդ կեսում, երբ Զմյուռնիայում եվրոպացի մասոնները հիմնեցին նոր օթյակներ, որոնք համեմատաբար ավելի երկար գործեցին: 1786թ. Կ. Պոլսում ստեղծվեցին «Saint Jean» («Սուրբ Հովհաննես»), իսկ Զմյուռնիայում՝ «La Vietoire» («Հաղթանակ») ֆրանսախոս օթյակները, որոնք գործում էին Ժնևի «Մեծ Օթյակի» հովանու ներքո: Թուրքական աղբյուրների վկայությամբ՝ 1760-ական թթ. Լեհաստանի «Մեծ օթյակի» արտոնագրով ստեղծվել էր «L´ Aurore de Zarograd» օթյակը: 1778թ. Զմյուռնիայում Մարսելի «Մեծ օթյակը» հիմնել է «Les Nations Reunies» (Միացյալ ազգեր) ֆրանսախոս օթյակը: Այս օթյակի արխիվը վկայում է, որ 1819 թ. այն ունեցել է մոտ 150 անդամ, հիմնականում ֆրանսիացիներ, անգլիացիներ, ամերիկացիներ, ավստրիացիներ, իտալացիներ և ռուսներ, բայց ոչ մի օսմանցի[2]: Մասոնությունը Օսմանյան կայսրության քրիստոնյաների, այդ թվում՝ զմյուռնահայության շրջանում, հիմնականում տարածում գտավ 1850-ական թվականներին, չնայած դրա համար նախադրյալներ էին ստեղծվել ավելի վաղ: Դրա սկիզբը դրեց 1839 թ. դեկտեմբերի 3-ին սուլթան Աբդուլ Մեջիդի (1823-1861) հռչակած Գյուլհանեի Հաթթը-շերիֆը[3], որի նախաձեռնողը եվրոպական կրթություն ստացած, բրիտանական խորհրդարանական կարգերի կողմնակից, Թուրքիայի արտաքին գործերի նախարար, «երիտասարդ թուրքերի ռահվիրա»[4] մասոն Մուստաֆա Ռեշիդ փաշան էր (1800-1858)[5]: Դրանով Թուրքիայում սկիզբ դրվեց բարեփոխումների կամ Թանզիմաթի դարաշրջանին[6]:

1840-ական թվականներին Թանզիմաթի հեռանկարներից ոգևորված «Իզմիրի հայոց մէջ կսկսի նոր շարժում մը», որի մասնակիցները «կխառնվին այն ընդհանուր հոսանքին, որ բոլոր Թուրքիոյ մէջ կսկսի»[7]: Այդ համընդհանուր շարժման մեջ ընդգրկված զմյուռնահայ երիտասարդների կատարյալ հոսք սկսվեց դեպի Ֆրանսիա՝ համալսարանական կրթություն ստանալու և վաճառականությամբ զբաղվելու նպատակով: 19-րդ դարի առաջին կեսում Զմյուռնիան «իբրև միջնորդ կարևոր դեր էր խաղում եվրոպական երկրների հետ առևտրի հարցում մինչ Սուեզի ջրանցքի բացումը»[8]: Լոնդոնի, Մանչեստրի «հայ վաճառականաց գաղութը կազմուած էր Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայերից»[9]: Եվրոպայում կրթություն ստացած և վաճառականությամբ զբաղված զմյուռնահայ մի խումբ երիտասարդներ լուսավորության, առաջադիմության և քաղաքական բարեփոխումների անհրաժեշտության գաղափարների ազդեցության տակ իրենց նվիրեցին ազգային միասնության, համերաշխության և եղբայրական փոխօգնության գործին: Այդ երիտասարդները ժողովրդին «հոգածութեան եւ զոհողութեան հոգի կը ներշնչէին, եւ անոնց հովանաւորութիւնը իրենց աշխատութեանց միացնելով օգտակար հաստատութեանց նախաձեռնարկներ կը լլային»[10]:

---

[1] Ֆեներճեան Ա., Ազատ-որմնադրութիւնը մօտաւոր Արեւելքի մէջ, «Կեանք եւ Արուեստ», 1936, հոկտեմբեր, թիվ 8, էջ 225:
[2] Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 146, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 53-54:
[3] Տե՛ս Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 499:
[4] Թոփչեան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, Մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 232:
[5] Տե՛ս Дулина Н. А. Танзимат и Мустафа Решид паша. М., 1984; Милер А. Ф. Мустафа паша Байрактар. М., 1947.
[6] Տե՛ս Миллер А. Ф. Краткая история Турции, М., 1948, ст. 68-69; Шабанов Ф. Государственный строй и правовая система Турции в период Танзимата, Баку, 1967, ст. 42-50.
[7] «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 205, 261:
[8] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան: Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը. Հ. Գ., Նոր դարու սկզբէն մինչեւ ի դարու սկիզբը, Մաս Բ. Արեւմտեան գաղութները, Ե., 2017, էջ 85, 89-90:
[9] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 92:
[10] Օրմանյան Մ., Ազգապատում, Գ հատոր,մաս Ա., Պէյրութ, 1961, էջ 3880:

Շնորհիվ 1840-ական թվականների նոր մտածողության տեր երիտասարդ մտավորականների ու վաճառականության՝ «Իզմիր առաջին փորձը կըներ եվրոպական քաղաքակրթութեան մոտենալուն»[1]: Նրանց գաղափարական ձևավորման վրա էական ազդեցություն թողեցին մասոնական օթյակների նախաձեռնած և գլխավորած 1848-1852 թթ. եվրոպական հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարը, ազգային միավորման և սահմանադրական շարժումները[2], որոնք ընթացան 18-րդ դարի ֆրանսիական մեծ հեղափոխության «ազատություն, հավասարություն, եղբայրություն» մասոնական կարգախոսով[3]:

Եվրոպայում տեղի ունեցած «հեղափոխական խմորումները» ի թիվս այլ ժողովուրդների «արձագանք գտան հայ ազգին մէջ»[4]: Դրանցից հատկապես «1848-ի ֆրանսիական հեղափոխությանն ենք պարտական մեր կեանքի յառաջադիմական երեւույթներից շատերը»[5], այդ թվում՝ մասոնական գաղափարախոսության տարածմանը և ազատ որմնադիրների օթյակների հիմնադրմանը: Մասոնությանն անդամագրված առաջին արևմտահայերը հիմնականում Եվրոպայում «իրապես կրթված, լուսավորության, առաջադիմության և ազատամտության գաղափարներով ոգևորված ու «ազգային ոգով ներշնչված»[6] մի խումբ երիտասարդ մտավորականներ ու «եվրոպականացած» վաճառականներ էին: 1848 թ. Փարիզում կրթություն ստացած 25-30 հայ ուսանողները[7] «գիտական, ազատական, հասարակական լեցուն պաշարով»[8], վերադառնալով հայրենի Կ. Պոլիս և Զմյուռնիա, 1850-1860-ական թվականներին դարձան արևմտահայ ազգային սահմանադրական շարժման հիմնական գործիչներն ու մասոնության տարածման գլխավոր դեմքերը: Այդ երիտասարդ մտավորականների ու վաճառականների մի մասը Եվրոպայում ուսանելու և առևտրական գործունեության իրականացնելու տարիներին բազմաթիվ շփումներ էին ունեցել եվրոպական մասոնների հետ, համալրել ազատ որմնադիրների օթյակների շարքերը:

Արևելյան (Ղրիմի) պատերազմի անմիջական ազդեցության տակ Օսմանյան կայսրությունում նոր բարենորոգումներ իրականացնելու ուղղությամբ պետական խոշոր գործիչ մասոն Մեհմեդ Ալի փաշայի (1815-1871) հեղինակած և 1856 թ. փետրվարի 18-ին սուլթան Աբդուլ Մեջիդի շնորհած «Հաթթը հյումայուն» հրովարտակի «մեծադղորդ խոստումները վարդագույն հեռանկարներ էին բացում»[9] արևմտահայության առաջ: 1856 թ. մարտի 30-ի Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածում ամրագրված «Թուրքիան եվրոպականացնելու» մեծ տերությունների հարկադրանքը[10] և այդ կապակցությամբ սուլթանի ստանձնած պարտավորությունները «վառվռուն հույսեր էին ներշնչում»[11] արևմտահայությանը, որ «Հաթթը հյումայունը» կարող է կյանքի կոչվել: Փարիզի դաշնագրի և նոր հրովարտակի ընձեռած հնարավորություններից «ամէնից վաղ օգտվեցին հայերը», ովքեր սկսեցին ճանապարհ հարթել «իրենց ներքին ազգային, հասարակական և կրոնական գործերի համար»[12]: Քաջալերված դրանից՝ արևմտահայ

---

[1] Ալպոյաճեան Ա., Զմյուռնիոյ տպարանները, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1964, թիվ 2, էջ 79:

[2] Տե՛ս Бейл Ж., История республиканской партии во Франции с 1814 по 1870 гг., М., 1906, с. 57; История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 3, М., 1938, с. 349; Ридли Дж., Указ. соч., ст. 252-257, 264-265.

[3] Տե՛ս Пименова Л. А., Идея свободы во французской революции XVIII века, «Новая и новейшая история», М., 1992, թիվ 1, ст. 72.

[4] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 79:

[5] Աճառեան Հ., Պատմութիւն Հայոց նոր գրականութեան, Պէյրութ, 1940, էջ 34:

[6] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 78:

[7] Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1848, 3 փետրվարի, թիվ 304:

[8] «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 92:

[9] Թոփչեան Ե., նշվ. աշխ., էջ 240:

[10] Տե՛ս Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թվականների), Ե., 2002, էջ 27-35, Թումանեան Կ., Պատմութիւն Արևելեան խնդրոյ, Լոնտոն, 1905, էջ 613:

[11] Թոփչեան Ե., նշվ. աշխ., էջ 240:

[12] Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում 1860-1910, Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 5:

մտավորականությունը սկսեց «ավելի խրոխտ քայլեր անել»[1], որը դրսևորվեց տարբեր ընկերություններ ստեղծելու և Կ. Պոլսում ու Զմյուռնիայում գործող եվրոպական մասոնական օթյակներին անդամակցելու մեջ: Մասոնությանը հարելու արևմտահայության «բազմաթիվ հմայքներից» մեկն էլ 1859թ. ապրիլին սկսված իտալական ազգային, ազատագրական պայքարն էր, որը ժամանակի հայ պարբերական մամուլում մեծ արձագանք գտավ և ջերմ համակրության արժանացավ: Այն գլխավորում էին բարձրաստիճան մասոններ Պիեմոնտի թագավոր Վիտորիո էմմանուիլ 2-րդը (1820-1878), վարչապետ կոմս Կամիլո Կավուրը[2] (1810-1861) և Ռիսորջիմենտոյի երևելի գործիչներ Զուզեպպե Գարիբալդին[3] ու Զուզեպպե Մացցինին[4]: Արևմտահայ մտավորականներին հայտնի էր, որ Զ. Գարիբալդին ազգային միավորման նպատակով իր համախոհներին կոչ է արել՝ «նախ միություն և համերաշխություն, այնուհետև ազատություն»[5]:

Առաջնորդվելով միության, համերաշխության և եղբայրության մասոնական կարգախոսով՝ մի խումբ ազատ որմնադիրներ 1859 թ. նոյեմբերի 19-ին Զմյուռնիայում հիմնեցին «Homer» («Հոմեր») թիվ 806 անգլախոս օթյակ: Օթյակի հիմնադիրներն անգլիացիներ էին, բացառությամբ Սերովբե Ազնավուրի և «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի անդամ երկու ֆրանսիացիների: Հիմնադրման պահին Ս. Ազնավուրն ընտրվեց «Հոմեր» օթյակի Մեծ Վերահսկիչ[6], որը Շոտլանդական կանոնակարգում Վարպետից հետո օթյակի երկրորդ բարձր պաշտոնն էր[7]: Զմյուռնիայի որոշ հայեր դիմեցին «Հոմեր» օթյակի առաջին Գերհարգելի Վարպետ Հայդ Քլարքին՝ օթյակին անդամագրվելու խնդրանքով, որը բավարարվեց: Այս օթյակի առաջին հայ անդամներից էր հայտնի վաճառական Միքայել Երամյանը[8]: «Անգլիայի Մեծ Օթյակը» բավական արագ օրինականացրեց «Հոմեր» օթյակի կանոնավոր լինելը, որին արտոնագիր շնորհեց 1860 թ. հունվարի 25-ին: «Հոմեր» օթյակի բացման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ 1860 թ. օգոստոսի 7-ին Մեջիդիե փողոցում գտնվող Անգլիական ակումբում, որը 1884 թ. տեղափոխվեց Ֆրանկների փողոց: Բացման արարողությունը գլխավորում էր Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հենրի Բուլվեր Լիթոնը (1801-1872): Նա հայտնի մասոն էր, անգլիական «Hertetord» («Հերթֆորդ») օթյակի անդամ[9] և «համոզուած էր թէ ազատ-որմնադրութիւնը մեծ առաքելութիւն մը ունէր Մերձաւոր Արեւելքի մէջ»[10]:

1861 թ. մարտի 31-ին Հ. Բուլվեր Լիթոնը Զմյուռնիայում հիմնեց ֆրանսախոս «La Victoire» (« Հաղթանակ») թիվ 896 օթյակը, որի բոլոր հիմնադիրները «Հոմեր» թիվ 806 օթյակի անդամ էի: Նույն թվականի նոյեմբերի 9-ին նա հիմնեց քրիստոնյաներից ու մահմեդականներից բաղկացած նոր օթյակ, որը կրեց իր անունը: «Bulwer» («Բուլվեր»)

---

[1] Թոփչեան Ե., նշվ. աշխ., էջ 240:

[2] Տե՛ս Морамарко М., Масонство в прошлом и настоящеи. Пер. с ит., М., 1990, с. 122; Ридли Дж., Указ. соч., с. 289; Ланин П. Тайные пружины истории. «Молодая гвардия», М., 1991, թիվ 8, с. 252.

[3] Զուզեպպե Գարիբալդին (1807-1882) «Երիտասարդ Իտալիա» մասոնական գաղտնի ընկերության անդամ էր: 1844 թ. Մոնտեվիդեոյի «L՛ Asile de la Paetu» («Առաքինության ապաստան») և «Les Amis de la Patrie» («Հայրենիքի բարեկամներ») թիվ 50 օթյակների անդամ; Նա մասոնության մեջ ամենաբարձր՝ 33 աստիճանի ազատ որմնադիր էր, Պալերմոյի «Մեծ Արևելք» օթյակի Մեծ Վարպետ, իսկ 1881 թ.՝ Մեմֆիսի արարողակարգի Մեծ Վարպետ: Տե՛ս Морамарко М., Указ. соч., с. 122, 278-279; Карпачев С. П. Масоны. Словарь. М., 2008, с. 123; Спаров В. Полная история масонства в одной книге. М., 2010, с. 187-189, Соловоев О.Ф. Указ соч. 76-77.

[4] Զուզեպպե Մացցինին (1805-1872) Եվրոպայում հայտնի բարձրապատիվ մասոն էր, 33-րդ աստիճանի ազատ որմնադիր: Նա «Երիտասարդ Իտալիա» օթյակի հիմնադիրն էր, բավարական իլումինարների փաստացի առաջնորդը 19-րդ դարում: Տե՛ս Таийные общества в истории человечества, или кто правит миром. Растов-на-Дану, 2010, с. 139-140, Соловьев О. Ф. Масонство далекое и близкое. «Новая и новейшая история», М., 1992, թիվ 4, с. 76.

[5] Невлер (Вилин) В. С. Гарибальди и его эпоха. В кн: Гарибальди Дж. Мемуары. Пер. с ит. М., 1966, с. 216.

[6] Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 153, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 65, «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79:

[7] Տե՛ս Борзаковский Д. Франк-масонство и тайныя общества древняго и новаго мира. М., 1900, с. 6-7.

[8] Տե՛ս Jamgocyqn O., նշվ. աշխ., էջ 65.

[9] Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 153, Jamgocyan O., Նշվ. աշխ., էջ 57, 65.

[10] Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 153:

թիվ 891 օթյակին անդամագրվեցին 16 մահմեդական և 11 հայ մասոններ, որոնցից Սերովբե Ազնավուրը դարձավ այս օթյակի Գերհարգելի Վարպետը[1]: Հ. Բուլվեր-Լիթոնը սերտ համագործակցում էր Ս. Ազնավուրի հետ նոր օթյակների ստեղծման և մասոնության գաղափարների տարածման ուղղությամբ: Անգլիայում բարձրագույն կրթություն ստացած և ազատ որմնադիր ձեռադրված Սերովբե Ազնավուրը 19-րդ դարի հայ մասոնության պատմության ամենաերևելի դեմքն էր: Նա ոչ միայն բարձրաստիճան մասոն էր, այլև Կ. Պոլսում և Զմյուռնիայում «տիեզերական եղբայրության» մասոնական գաղափարախոսության գլխավոր տարածողներից ու քարոզիչներից մեկը: Ս. Ազնավուրը Կ. Պոլսում գործող անգլախոս և ֆրանսախոս մասոնական յոթ օթյակներից հինգի հիմնադիրներից էր[2], «Սեր» օթյակի առաջին Գերհարգելի Վարպետը: Ազատ որմնադիրների շրջանում մեծ հեղինակություն վայելող Ս. Ազնավուրը «Կարկառուն դէմք էր Պոլսոյ և Զմյուռնիոյ մէջ»[3]: Նրա մասոնական եռանդուն գործունեության շնորհիվ արևմտահայ երիտասարդության շրջանում ազատ որմնադիրների մի ամբողջ սերունդ ձևավորվեց: Նրանց թվում էին նաև իր զավակները՝ գործակատար Անտուան Ազնավուրը (1844-1867), ով մի քանի օթյակի անդամ էր և «Արևելքի Միություն» օթյակի վարպետ, և Կ. Պոլսում հայտնի ճարտարապետ Հովսեփ Ազնավուրը (1854-1936)[4]:

Ս. Ազնավուրի և Հ. Բուլվեր-Լիթոնի համագործակցությունը, գործադրած ջանքերն ու աջակցությունը նպաստեցին նաև «Հոմեր» օթյակի գործունեությանը: 1877թ. փետրվարի 15-ին Զմյուռնիայում ծագած քաղաքական խռովության պատճառով «Հոմեր» օթյակը հարկադրված իր արտոնագիրը վերադարձրեց «Անգլիայի Մեծ Օթյակին», իսկ 1887թ. վերջնականապես դադարեցրեց գործելուց[5]:

«Հոմեր» և «Հաղթանակ» օթյակներից բացի 19-րդ դարում Զմյուռնիայում գործել են նաև անգլախոս ևս երեք օթյակներ, որոնց գործունեության և երևելի անդամների մասին մեզ քիչ փաստեր են հասել: Ստույգ հայտնի է, որ բոլոր այդ օթյակների հիմնադրման նախաձեռնողն ու արտոնագիր շնորհողը եղել է «Անգլիայի Մեծ Օթյակը»: 1863 թ. մարտի 4-ին հիմնադրվել է «Saint John´s» («Սուրբ Հովհաննես») թիվ 952 օթյակը, որը կարճ գոյատևեց և 1864 թ. դադարեցրեց իր աշխատանքները: 1864 թ. հիմնադրվեց «Saint George´s» («Սուրբ Գևորգ») թիվ 1015 օթյակը, իսկ 1870 թ.՝ «Sion» («Սիոն») օթյակը, որոնք գործում էին ֆրանկների փողոցի անգլիական ակումբում: 1894 թ. հունիսի 6-ին «Անգլիայի Մեծ Օթյակը» դադարեցրեց «Հաղթանակ», «Սուրբ Հովհաննես», «-Սուրբ Գևորգ» և «Սիոն» օթյակների ֆինանսավորումը[6]:

1859 թ. նոյեմբերի 19-ին Զմյուռնիայում հիմնված «Homer» (Հոմեր) թիվ 806 օթյակի Մեծ Վերահսկողի բարձր պաշտոնը զբաղեցրեց Սերովբե Ազնավուրը[7]: Երկու տարի անց Սերովբե Ազնավուրը մասոնական հերթական բարձրագույն աստիճան ստացավ նոյեմբերի 9-ին Կ. Պոլսում հիմնված անգլախոս «Bulwer» (Բուլվեր) թիվ 891 օթյակում՝ ընտրվելով Գերհարգելի Վարպետ: Այս օթյակի 11 հայ անդամների թվում էին վաճառական Միքայել Երամյանը, Բարձր դռան բարձրաստիճան պաշտոնյա Ասատուր Սարգսյանը, Կ. Պոլսի առևտրի պալատի հիմնադիրներից Սենեքերիմ Մանուկյանը և հայտնի թատերական գործիչ Հակոբ Վարդովյանը[8]:

Սենեքերիմ Մանուկյանը (1824-1908) Կ. Պոլսի մանուֆակտուրային տնտեսության և առևտրական կյանքում կարևոր դերակատարում ունեցող գործարար էր, ով ուղղակի հարաբերություններ ուներ եվրոպական երկրների վաճառականության հետ: Նրա

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 154, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 57, 62, «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 79:
[2] Տե՛ս «Հայրենիք», 1954, դեկտեմբեր, թիվ 12, էջ 95:
[3] Նույն տեղում, 1955, փետրվար, թիվ 2, էջ 79, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161:
[4] Տե՛ս «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 94, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 176, 178, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 84.
[5] Տե՛ս «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79:
[6] Տե՛ս Պէյլէրեան Ա., Նշվ. աշխ., էջ 154, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 65:
[7] Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», Տարեգիրք Ե տարի, Փարիզ, 1935, էջ 78-79, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 63-64:
[8] Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 154; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 62, «Կեանք եւ Արուեստ», տարեգիրք Ե տարի, Փարիզ, 1935, էջ 79:

գլխավորած առևտրական պալատը մասնաճյուղեր ուներ Լոնդոնում, Մանչեսթրում և Բաղդադում: Նա միաժամանակ հայտնի բարերար էր, 1868-1877 թվականներին «իրական բարիք մ» եղաւ» Կ. Պոլսի ազգային հիվանդանոցին, ինը տարի շարունակ «գրեթե միայնակ վարեց»[1] հիվանդանոցի հոգաբարձուների խորհուրդը, որի «պարտականությունները ծայրաստիճան խոհականությամբ վարեց»[2]: Նրա գլխավորած խորհրդի կազմում էին նաև Մկրտիչ Աղաթոնը, Հակոբ Նորատունկյանը, Սերովբե Վիչենյանը[3], ովքեր նույնպես մասոն էին: Անուրանալի են Ս. Մանուկյանի ծառայությունները «ազգային շրջանակին մէջ»: Սկսած 1860 թ. մինչև 1891 թ. նա պարբերաբար ընտրվում էր ազգային երեսփոխան, ֆինանսական խորհրդի, քաղաքային ժողովի, վարչական ատյանի անդամ:

Հակոբ Վարդովյանը (1840-1898) իր ժամանակի մեծագույն բեմադրիչներից մեկն էր, Կ. Պոլսում մեծ ճանաչում ունեցող եվրոպական տիպի «Օսմանիե» թատրոնի հիմնադիրը: Նրա «անխոնջ ու անվհատ աշխատության շնորհիվ»[4] «Արևելյան թատրոնի» դերասաններից 1868թ. կազմված կոլեկտիվը տասը տարի շարունակ Արևելքի ամենամեծ ու կայուն ծրագրով գործող թատերախումբն էր: Վարդովյան թատրոնը Կ. Պոլսում ապրող թուրքախոս ժողովուրդների՝ թուրքերի, հայերի, հրեաների, բուլղարների և այլոց հոգևոր մերձեցման կենտրոնն էր[5]: Այն իր արհեստավարժությամբ և գեղարվեստական բարձր մակարդակով 1876 թ. զարմացրել ու հիացրել էր անգլիական հայտնի դիվանագետ և քաղաքական գործիչ լորդ Սոլսբերիին: Առանց Հ. Վարդովյանի հազիվ թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան: Նա առաջինը թուրքերենով բեմադրեց ֆրանսիացի նշանավոր գրող և մեծ մասոն Վիկտոր Հյուգոյի[6] «Արքան զվարճանում է», «Լուկրեցիա Բորջիա» և «Անջելո» դրամաները[7]:

1864 թ. ապրիլի 27-ին Զմյուռնիայում հիմնվեց հայ մասոնության պատմության մեջ առաջին հայախոս օթյակը՝ «Տիգրան» թիվ 1014 անվանումով, որին անդամագրվեցին հասարակական գործիչներ, լրագրողներ, ազգասեր և գործարար մարդիկ: Օթյակի հիմնական հիմնադիրները «Հոմեր» թիվ 806 օթյակի կարևոր դեմքերն էին: Հայկական օթյակ ստեղծելու գաղափարը դեսպան Հ. Բուլվեր-Լիթոնինն էր, իսկ անմիջական նախաձեռնողը Սերովբե Ազնավուրն էր[8]: Օթյակի հիմնադրումը պայմանավորված էր ներքին և արտաքին մի քանի գործոններով: 1860 թ. մայիսի 24-ին և 1863 թ. մարտի 17-ին ազգային սահմանադրությունները չարդարացրին արևմտահայության նոր կյանքի, միության, զորության և ազգային հույսերի իրականացման ակնկալիքները: Արևմտահայ մտավորականությունը, հասկանալով, որ ազգային սահմանադրությունը չի երաշխավորում մարդկանց կյանքի, գույքի անվտանգությունը և քաղաքացիական ազատություններ չի շնորհում, հարկադրված եղավ ապավինել մասոնական օթյակների զորությանը: Հայ մասոնությունը ծնվեց ու զարգացավ ամենից առաջ իբրև հակազդեցություն ազգային սահմանադրության «թմրեցուցիչ եւ յուսախաբութիւն ծնեցնող գործունէութեան»[9]: Ազգային սահմանադրության «ազդեցութեան խիստ փանաքի լինելը»[10], իրավազրկությունը, հարկային ծանր բեռը, բռնի կրոնափոխությունը, 1862 թ. հուլիս-օգոստոսի Զեյթունի ապստամբության եղերական հետևանքները հայ մտավորականներին, հասարակական

---

[1] Քէչեան Բ., Պատմութիւն Սուրբ Փրկչի Հիւանդանոցին Հայոց ի Կոստանդնուպոլիս, Կ.Պոլիս, 1888, էջ 237, Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Ա, Պէյրութ, 1961, էջ 4433-4435:
[2] Զարդարեան Վ.Գ., Յիշատակարան, էջ 75:
[3] Տե՛ս Քէչեան Բ., նշվ. աշխ., էջ 224-225:
[4] Պարոնյան Հ., Երկերի ժողովածու, հատոր 2, Ե., 1964, էջ 254:
[5] Տե՛ս Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատոր 2, Ե., 1969, էջ 7-9:
[6] Տե՛ս Гоголицин Ю. М. Тайные общества в истории человечества или кто правит миром? Ростов -на-Дону, 2010, с. 57.
[7] Տե՛ս Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Ե., 2012, էջ 73, 516:
[8] «Հայրենիք» ամսագիր, 1955, փետրվար, թիվ 2, էջ 81, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ, էջ 161, 164, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 67:
[9] «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 75:
[10] Չիլինկիրեան Գ., Ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, 1883, էջ 56:

գործիչներին ու վաճառականությանը դրդեցին դեպի մասոնություն, որոնց օթյակների ամենակարողության հետ լուրջ հույսեր էին կապում:

Զեյթունի ապստամբության հանգուցալուծման գործում Ֆրանսիայի կայսր մասոն Նապոլեոն երրորդի[1] միջամտությունը, Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Դրուեն դը Լուիի, Հալեպի ֆրանսիական հյուպատոսի անմիջական մասնակցությունը փոխադարձ զիջումների գնով հաշտության ձեռք բերման գործում Ֆրանսիայի արևելյան քաղաքականության բաղկացուցիչ մասն էր, որը նպատակ էր հետապնդում ամրապնդել տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Կիլիկիայում[2]: Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հ. Բուլվեր-Լիթոնը դրանում տեսնում էր ոչ միայն իր պետության դիրքերի թուլացումը Թուրքիայում, այլև ֆրանսիական մասոնական օթյակների ակտիվացման լուրջ նախադրյալներ արևմտահայության շրջանում: Դրա վկայություններից մեկն այն էր, որ թուրքական «Նոր օսմաններ» շարժման գաղափարախոսներ Իբրահիմ Շինասին, Նամիկ Քեմալը, պետական և զինվորական մի շարք պաշտոնյաներ, անգամ Զեյթունի ապստամբությունը ճնշած Ահմեդ Ազիզ փաշան ֆրանսիական «Արևելքի միություն» օթյակի անդամ էին[3]: Հ. Բուլվեր-Լիթոնը նկատում էր, որ Զեյթունի դեպքերից հետո արևմտահայ մտավորականների ու վաճառականների համակրանքը Ֆրանսիայի նկատմամբ հետզհետե ավելանում է. նրանք հակվում են դեպի «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակը և ֆրանսիական մասոնությունը: Դրան էին միտված նաև Կ. Պոլսում և Զմյուռնիայում գործող ֆրանսիական մասոնական օթյակների և, հատկապես Զեյթունի ապստամբությունից հետո՝ 1862 թ. հոկտեմբերի 23-ին հիմնված ֆրանսախոս «Union d՛ Orient» («Արևելքի միություն») մասոնական օթյակի[4] Գերհարգելի Վարպետ Լուի Ամիաբլի գործունեությունը: Հ. Բուլվեր-Լիթոնն արևմտահայության շրջանում մասոնության ազդեցության տարածման գործում Լ. Ամիաբլին համարում էր իր մրցակիցը, ուստի ջանում էր ամեն կերպ թուլացնել ֆրանսիական մասոնության դիրքերը և հայությանն իր կողմը գրավել[5]: Նրա աջակցությամբ Սերովբե Ազնավուրը 1862 թ. օգոստոսի 21-ին ստեղծեց «Հայկ» կամ «Օրիոն» անվանումով եղբայրական ընկերություն, որը Մանչեսթրի «Odd Fellows» մասոնական օթյակի մասնաճյուղն էր[6]: Ս. Ազնավուրի խնդրանքով և Հ. Բուլվեր-Լիթոնի համաձայնությամբ 1863 թ. ձմռանը անգլիական «Star of the East» («Արևելքի Աստղ») և հայկական «Հայկ» օթյակները միասնաբար տոնեցին իրենց հիմնադրման առաջին տարեդարձը: Հ. Բուլվեր-Լիթոնի միջամտության շնորհիվ միայն Բարձր դուռը 1863թ. մարտին վավերացրեց արևմտահայերի Ազգային սահմանադրությունը[7]: Հայկական «Տիգրան» օթյակի հիմնադրման գործում որոշակի ազդեցություն ունեցավ նաև մասոնների գլխավորած ազգային-ազատագրական և միավորման համար 1862 թ.՝ իտալացիների ու չեռնոգորցիների, 1863 թ.՝ լեհերի և 1864 թ.՝ Շլեզվիգ-Հոլշտայնի դքսության գերմանացիների պայքարը, որոնց արևմտահայ մտավորականությունն ու մասոնությունը քաջատեղյակ էր: Այս առումով «Տիգրան» օթյակի ստեղծումը 1860-ական թվականների սկզբի «պատմական օրերու արգասիքն էր»[8]:

---

[1] Ֆրանսիայի կայսր Նապոլեոն 3-րդի (1808-1873) կառավարման տարիները սերտորեն առնչվում են մասոնության հետ: 1862 թ. հունվարի 11-ին կայսերական հրամանագրով նա «Աստծո և ժողովրդի կամոք» «Ֆրանսիայի Մեծ Արևելք» Օթյակի Մեծ վարպետ նշանակեց մարշալ Բեռնար Մանյանին (1791-1865): Նրա մահից հետո թույլ տվեց մասոններին ինքնուրույն ընտրել օթյակի Մեծ վարպետին, Տե՛ս Ридли Дж. Указ. соч., с. 261-262, 1976, թիվ 9, с. 140; Ланин П. Тайные пружины истории, «Молодая гвардия», М., 1991, թիվ 8, с. 253:

[2] Տե՛ս Մելիքսեթեան Վ., Զէյթունի 1862 թ. ապստամբութիւնը, Զէյթունի պատմագիրք, Պուենոս Այրէս, 1960, Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը (1409-1921), Ե., 1969:

[3] Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ, էջ 162:

[4] «Արևելքի Միություն» օթյակի հիմնադիրներից 5-ը և 65 անդամներից 17-ը պոլսահայ համայնքի տարբեր բնագավառների ճանաչված դեմքեր էին, իսկ օթյակի Պատվավոր Վարպետը Սերովբե Ազնավուրն էր: Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 157-158:

[5] Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ, էջ 158, Jamgocyan O., նշվ. աշխ.,էջ 67:

[6] Տե՛ս «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 95-100, նոյեմբեր, թիվ 11, էջ 98-99, դեկտեմբեր, թիվ 12, էջ 92:

[7] Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 160:

[8] Նույն տեղում, էջ 163:

Հ. Բուլվեր-Լիթոնի նախաձեռնությամբ և Սերովբե Ազնավուրի թելադրանքով անգլիացի յոթ մասոններ Զմյուռնիայում հայկական օթյակ ստեղծելու նպատակով խնդրագիր ներկայացրին «Անգլիայի Մեծ Օթյակին», որը նրանց խնդրանքը բավարարեց: «-Տիգրան» թիվ 1014 օթյակի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1864 թ. օգոստոսի 12-ին: Իր գործունեության առաջին 12 տարիների ընթացքում «Տիգրան» օթյակն ունեցել է 118 անդամ, որից 108-ը՝ հայ, 7-ը՝ թուրք և 3-ը՝ հույն: Օթյակին անդամագրվել են հիմնականում երիտասարդ մարդիկ, որոնց միջին տարիքը կազմել է 35 տարին: Օթյակի անդամների թվում գերակշռություն են կազմել վաճառականները՝ մոտ 70 մարդ, մյուսները եղել են ամենատարբեր մասնագիտությունների տեր զմյուռնահայ ճանաչված դեմքեր[1]:

«Տիգրան» օթյակը հայ մասոնության պատմության մեջ կարևոր է ոչ միայն իր բեղուն գործունեությամբ, այլև ամենից առաջ նրանով, որ այս օթյակին անդամագրվել են «Զմյուռնահայ մտաւորական վերազարթնումի ռահվիրաներէն շատերը» [2]: Նրանց թվում էին 1866 թ. օթյակին անդամագրված արևմտահայ մամուլի տաղանդավոր դեմքեր, հայտնի հրապարակախոսներ ու խմբագիրներ Մատթեոս Մամուրյանը, Գրիգոր Չիլինկիրյանը և Ղուկաս Պալտազարյանը, թարգմանիչ Մեսրոպ Նուպարյանը, դերասան Ստեփան Էքշյանը[3]: Օթյակի երևելի անդամներից Զմյուռնիայի «տաղանդավոր գրագետ» Մատթեոս Մամուրյանը (1830-1901) «իբր գրագետ անսովոր տիպար մը եղած է Թուրքիոյ հայոց մէջ, իբր գաղափարի ժիր մշակ մը և ազգային բազմահմուտ ու արդյուավոր գործիչ մը»[4]: 1848 թ. Փարիզի Մուրադյան վարժարանում ուսումառության համար առաջին մրցանակ ստացած[5] և Քեմբրիջի համալսարանում ուսանած, 1858 թ. Եվրոպայում շրջագայած Մատթևոս Մամուրյանը շատ ուսանողների նման «ժողովրդոց անկախության, բարօրության, արդարության հաղթանակը կերազեր... Կը զմայլեր Մածծինիի ու Կարիպալտիի վրա, որ գաղտնի ընկերություններ կազմելով՝ ազատութեան ու անկախութեան ոգին գործավորներու մեջ սփռելը կը ջանային»[6]: Մ. Մամուրյանը եվրոպական ազատական գաղափարների ազդեցության տակ դարձավ արևմտահայ սահմանադրական շարժման ակտիվ գործիչներից մեկը և հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսը: 1862 թ. նա հանգանակություն կատարեց Զեյթունի ապստամբների օգտին, հրապարակավ հանդես եկավ Կիլիկիայում Ազիզ փաշայի արյունահեղ գործողությունները դատապարտող հոդվածներով: 1860-1865թթ. Մ. Մամուրյանը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիվանապետն էր: Նա երեսուն տարի Զմյուռնիայում հրատարակեց «Արևելյան մամուլ» գրական-քաղաքական հանդեսը, թարգմանաբար տպագրեց եվրոպական գրականության նշանավոր դեմքեր, մասոններ Վոլտերի, Ի. Գյոթեի, Գ. Լեսինգի, Վ. Հյուգոյի[7], Ա. Լամարթինի (1790-1869), Ա. Մյուսեի (1810-1857) ստեղծագործությունները:

Մատթեոս Մամուրյանը «հայ գրականութեան հրաշակերտներից մեկում»[8] իր «-Հայկական նամականի կամ հայու ճակատագիր» վեպում «վարպետ վրձնով» ներկայացնում է «ժամանակի ականավոր հայ դեմքերին, որոնց մի մասն իր ազատ որմնադիր

---

[1] Տե՛ս «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 81, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 67:

[2] Տե՛ս «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 81:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 82-83: «Կեանք և Արուեստ», Փարիզ, 1935, էջ 73; Պէյլէրեան Ա., նշվ. աշխ, էջ 161, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 69-71:

[4] Ալպոյաճեան Ա., Զմյուռնիո տպարանները, էջ 83:

[5] Տե՛ս Ասատուր Հ., նշվ. աշխ., էջ 122:

[6] Մամուրեան Մ., Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Երկեր, Ե., 1966, էջ 137:

[7] Վոլտերը ֆրանսիական մասոնության օրրան «Ինը քույրեր» նշանավոր օթյակում ազատ որմնադիր ձեռնադրվել է 1778 թ. ապրիլի 7-ին: Գյոթեն Վայմարի «Ամալիա» օթյակի անդամ է դարձել 1780 թ. հունիսի 23-ին: Լեսսինգը Համբուրգի «Երեք վարդ» օթյակի անդամ էր: Վիկտոր Հյուգոն «Սիոնի օրդենի» մեծ ղեկավարն էր 1844-1885 թվականներին: Տե՛ս Ридли Дж., Указ. соч, с. 139; Карпачев С., Указ. соч., с. 113, 134, 238; Морамарко М., Указ. соч., с. 263, 266, 269; Черняк Е. Б., Западноевропейское масонство XVIII века, «Вопросы истории», М., 1981, թիվ 12. с. 114; Гоголицин Ю. М. Указ. соч., с. 57; Спаров В. Указ. соч., с. 180, 182.

[8] Ասատուր Հրանտ, Դիմաստուերներ, էջ 132:

եղբայրներն էին: Վեպի գլխավոր հերոս Վրույրը Մատթեոս Մամուրյանն ինքն է: Վրույրը պարահանդեսում հանդիպում է դիմակների տակ թաքնված մի խումբ հայ գործիչների, որոնցից ոչ մեկի անունը մասոնական գաղտնապահությամբ չի հիշատակում: Սակայն «զիրենք ծածկող դիմակը այնչափ թափանցիկ է»[1], իսկ հեղինակի բնութագրումները՝ այնքան դիպուկ, որ նրանք հեշտությամբ բացահայտվում են: Վրույրի օթյակում պարահանդեսին մասնակցողներից Արբունը բժիշկ Սեվիչենն է, Թաշմանը՝ բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Նուրհանը՝ հրապարակախոս Գրիգոր Օտյանը, Արգամը՝ բժիշկ Բարունակ բեյ Ֆերուհխանը, Եղումը՝ «Մեղուի» խմբագիր Հարություն Սվաճյանը, Թոթվիկը՝ ռուսական հյուպատոսարանի թարգման Հաբեթիկ Նեվրուզյանը, Լուտանեանը՝ «Արևմուտքի» խմբագիր Ստեփան Ոսկանյանը, Եանսինուրը՝ ազգային գործիչ, բժիշկ Նահապետ Ռուսինյանը[2]: Նրանց, ինչպես նաև պարահանդեսի դիմակավոր և անդիմակ այլ մասնակիցների Մ. Մամուրյանը ներկայացնում է «իր կրակոտ, կծող, հեգնող, երբեմն անգութ ոճով, հրապարակագրի բոլոր արիութեամբը, արհամարհելով ամէն նկատում և իր զգացումներէն ու համոզումներէն վարուած միայն՝ իր դատումների մէջ»[3]

Համբավավոր հրապարակախոս, հասարակական, գրական գործիչ և թարգմանիչ, բարձրաստիճան մասոն Գրիգոր Չիլինկիրյանը (1839-1923) «Տիգրան» օթյակի Մեծ Վերահսկիչն էր[4]: Նա «իր ամէնէն վառվռուն տարիներին մեջ՝ տարածելու համար իր գաղափարները և պայքարելու համար խաւարեալ գաղափարներու և նորահաստատ ազգային սահմանադրութեան հակառակորդներուն դէմ»[5] իր համախոհներ «եռանտուն երիտասարդ» Պեպեքի ամերիկյան վարժարանում ուսանած Արմենակ Հայկունու[6], Գալուստ Կոստանդյանի (1840-1898) և իր քնակալ Մատթեոս Մամուրյանի հետ 1861-1867 թթ. Զմյուռնիայում հրատարակեց «Ծաղիկ» հանդեսը, որը Հ. Սվաճյանի «Մեղուի» և Ստ. Ոսկանյանի «Արևմուտքի» հետ դարձավ արևմտահայ դեմոկրատների ձայնափողը: Իր գաղափարակից մասոն եղբայրների օրինակով նա Տետեյանների տպարանում տպագրեց 30 հատոր «խղճամիտ թարգմանած»[7] ֆրանսիական մի շարք անվանի հեղինակների, այդ թվում՝ Վ. Հյուգոյի, Շատոբրիանի, Ա. Լամարթինի, Ա. Մյուսեի, Ա. Պրեվոյի, է. Սյուի, Ժ. Սանի և այլոց ստեղծագործությունները[8]: Գ. Չիլինկիրյանը «չափե դուրս ազատախոհ, չափէ դուրս պայքարող հոգի ունէր»[9] և որպես ազատ որմնադիր ջատագովում էր Վ. Հյուգոյի «հեղաշրջական» հայացքները, ում հետ նամակագրական կապ ուներ, ջերմ համակրանքով արտահայտվում էր մեծ մասոն Զ. Գարիբալդու և նրա գլխավորած ազատագրական պայքարի մասին: Ազնիվ զգացումներով տոգորված Գ. Չիլինկիրյանը առաջադեմ էր ազգային-ազատագրական խնդիրները «բազուկի» և «զինական հեղափոխությամբ» լուծելու խնդրին, պաշտպանում էր զեյթունցիների պայքարը: Արևմտահայ սահմանադրական շարժման ջատագով Գ. Չիլինկիրյանն ակտիվորեն մասնակցում էր ազգային վարչական և կրթական գործերին, Զմյուռնիայի գավառական ժողովի ու ուսումնական խորհրդի անդամ էր[10]:

Զմյուռնիայում առաջին ազգային թերթի անխոնջ խմբագիր Ղուկաս Պալդազարյանը (1810-1878) «ազգասէր բարեկամներեն բավական քաջալերութեան ընդունելով»[11] 38 տարի շարունակ հրատարակեց «Արշալույս Արարատյան» լրագիրը, որը «ճշմարիտ

---

[1] Նույն տեղում, էջ 125:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 132:
[3] Նույն տեղում, էջ 132:
[4] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, մայիս, թիվ 7, էջ 132:
[5] Զարդարեան Վ., Յիշատակարան, երկրորդ հատոր, էջ 339:
[6] Տե՛ս Ասատուր Հ., Դիմաստուերներ, էջ 138:
[7] Նույն տեղում, էջ 142:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 142; «Հայրենիք» ամսագիր, 1937 մայիս, թիվ 7, էջ 132:
[9] «Հայրենիք» ամսագիր, 1937, մայիս, թիվ 7, էջ 132:
[10] Տե՛ս Ղազարյան Հ., Գրիգոր Չիլինկարյան, Ե., 1959; Կարինյան Ա., Արևմտահայ լուսավորիչները 60-70 ական թվականներին, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1944, թիվ 6, Զարդարեան Վ., նշվ. աշխ., էջ 342, «Արևելյան մամուլ», 1905, թիվ 24:
[11] Ալպոյաճեան Ա. Զմյուռնիո տպարանները, էջ 78:

արշալույսն էր հայ լրագրութեան»[1]: Հայ պարբերական մամուլի պատմության մեջ «Արշալույս Արարատյանը» լրագիրը «ազգային հին ու նոր կեանքն անընդհատ նկարելու մի միակ հայելին էր»[2], որի մասոնական գաղափարների ազդեցությունը կրող բազմաբովանդակ հրապարակումները ոչ միայն լուսավորում էին հայոց աշխարհը, այլև Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական կարևոր իրադարձությունները: 1848թ. եվրոպական հեղափոխությունների և ազգային-ազատագրական պայքարի բռնկումից ոգևորված մասոն Ղ. Պալդազարյանի խմբագրած «Արշալույս Արարատյանը» «ժամանակին պահանջմանց ջանալով որդեգրեց հայրենասիրություն, ուսումնասիրություն և եղբայրասիրություն»[3] սկզբունքը, որին հավատարիմ մնաց տարիներ շարունակ: Բարձր գնահատելով «հայ խմբագրաց այս անվանի նահապետի» վաստակը՝ Մ. Մամուրյանը իր գործընկերոջը ու օթյակի եղբորը համարում էր «իբրև խմբագիր հայ օրագրութեան մէջ եզական պատկեր մը», ով այդպիսին «պիտի մնա միշտ՝ իր գաղափարներով ու իրեն յատուկ արժանիքովն»[4]: «Արշալույս Արարատյանը» կատարյալ շտեմարան էր ոչ միայն եվրոպական քաղաքական բազմաբնույթ իրադարձությունների, այլև հայ հասարակական կյանքի ցանկացած բնագավառի ուսումնասիրության համար[5]:

Թարգմանիչ, բառարանագիր և հրապարակագիր Մեսրոպ Նուպարյանը (1842-1929) Զմյուռնիայում հայտնի տպագրիչներ մասոն Տետեյան եղբայրների քեռորդին էր[6], առաջին թարգմանությունները տպագրել է «Արշալույս Արարատյան» թերթում, իսկ հրապարակախոսական և գիտական հոդվածներով աշխատակցել «Ծաղիկ», «Արևելյան մամուլ» պարբերականներին, որոնց խմբագիրներն իր նման մասոն էին: Մ. Նուպարյանը հատուկ ընտրությամբ, թուրքական գրաքննության դաժան պայմաններում, թարգմանել է եվրոպական մի շարք հեղինակների ստեղծագործությունները, որոնց թվում կարևոր տեղ են գրավում մասոններ Վոլտերը, Վ. Հյուգոն, Ի. Գյոթեն, ինչպես նաև Ֆ. Շատոբրիանը, Ժ. Բ. Մոլիերը, Ժ. Լաֆոնտենը և ուրիշներ: Մ. Նուպարյանի լավագույն թարգմանություններից մեկը ֆրանսիական հեղափոխական բանակի կապիտան մասոն Ռուժե դը Լիլի[7] (1760-1836) հեղինակած Ֆրանսիայի ազգային օրհներգ «Մարսելիեզի» ամբողջական թարգմանությունն է[8], որն աշխարհաբար լույս է տեսել 1877 թ. ապրիլին Մատթեոս Մամուրյանի հրատարակած «Արևելյան մամուլ» թերթում[9]: Մեծ է Մ. Նուպարյանի վաստակը բառարանագրության մեջ: Նա Գալուստ Կոստանդյանի, Մատթեոս Մամուրյանի և Գրիգոր Մսերյանի օգնությամբ և աջակցությամբ[10] կազմեց «Բառարան ֆրանսերենե հայ-աշխարհիկը»՝ շուրջ 40 հազար բառով, որը «գերագույն ճգնաց արդիւնք է և աննկան կամքի մ՛ուժով միայն կրցավ գլուխ ելնել»[11]: Իր երկարատև և բեղուն գրական գործունեությամբ Մ. Նուպարյանը «գնահատելի ծառայութիւն մատուցած է»[12] հայ հասարակական մտքին և իր աշխատակցած պարբերականներին:

Հայ թատրոնի պատմության մեջ հիշատակության արժանի դեմքերից Ստեփան Էքշյանը (1834-1901) թատերական բեղմնավոր գործունեություն է իրականացրել Կ. Պոլսում և Զմյուռնիայում: Սկսած 1861թ. նա հանդիսացել է «Արևելյան թատրոնի» կար-

---

[1] Գալէմքերեան Գ., նշվ. աշխ., էջ 52:
[2] Նույն տեղում, էջ 57:
[3] Նույն տեղում, էջ 51:
[4] «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1878, հունիս էջ 65-66
[5] Տե՛ս Հակոբյան Մ., Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860), Ե. 1984, էջ 35:
[6] Տե՛ս Ասատուր Հ., Դիմաստուերներ, էջ 191:
[7] Տե՛ս Ридли Джаспер, Фримасоны. Люди, творящие мировую историю. Пер. с англ., М. 2007, стр. 166.
[8] «Մարսելիեզի» հայերեն առաջին թարգմանությունը 1854թ. կատարել է նշանավոր գրող և հրապարակախոս, մասոն Ստեփան Ոսկանյանի եղբայր Հակոբ Ոսկանյանը (1824-1907), որը լույս է տեսել Զմյուռնիայում՝ Տետեյան եղբայրների տպարանում հրատարակվող «Արփի Արարատյան» հանդեսում: 1864 թ. «Մարսելիեզը» թարգմանել է նաև Ստեփան Ոսկանյանը: Տե՛ս Բախչինյան Ա., Մարսէլյէզը և հայ իրականութիւնը, «Հայկազեան Հայագիտական Հանդես», 2001, էջ 201:
[9] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1877, ապրիլ, էջ 152-154:
[10] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1902, էջ 404:
[11] Նույն տեղում, 1893, էջ 420, Ասատուր Հ., Դիմաստուերներ, էջ 193:
[12] Ասատուր Հ. Հայ մատենագրությունը և հայ մատենագիրները, էջ 328-329, 330:

կառուն սյուներից մեկը», գլխավորել է «Հայ դերասանական ընկերությունը»[1]: Որպես դերասան Ս. Էքշյանը մեծ հաջողություններ է ունեցել հատկապես պատմական ողբերգություններում և արևմտաեվրոպական մելոդրամաներում: Նրան համարել են «մեր ազգային դերասանութեան սկիզբն ու հայրը», «հայ դերասանութեան ստեղծիչ»[2], դերասան, ով իր դերերը կատարել է «բնականութեան ճշգրիտ սահմաններուն մէջ»[3]: «Արշալույս Արարատյանը», հաճախակի անդրադառնալով «Արևելյան թատրոնի» բեմադրություններին, նշում էր, որ դերասանների շրջանում «ամէնէն շատ համակրութիւն և համարում»[4] ուներ Ստեփան Էքշյանը: Թերթի բնութագրմամբ՝ նա «իր զանազան առավելութեամբքը ազգին մէջ առաջինը կըրնա սեպուիլ»[5]: Ս. Էքշյանը «հայ բեմը պաշտող, ինքն էլ տաղանդավոր դերասան»[6] լինելուց զատ, միաժամանակ «Արևելյան թատրոնի» ամէնէն փայլուն ու բեղմնավոր բեմական գործիչներեն»[7] մեկն էր, բազմաթիվ հիշարժան բեմադրությունների հեղինակ, «դեր ստեղծելու մասին ճարտար առաջնորդ»[8]:

«Տիգրան» օթյակի անդամների թվում էին «արժեքաւոր հայ անձնաւորութիւններ՝ ազգասէր, գրասէր եւ արուեստագետ»[9] մարդիկ: Նրանցից մեկը 1866թ. օթյակին անդամագրված դրամատուրգ, դերասան Սարգիս Վանանդեցին (Միրզայան, 1830-1871) էր[10]: Նա Զմյուռնիայի «Հաշտենից», «Վասպուրական» ընկերությունների անդամ էր, «Աղքատասիրաց ընկերության» ատենադպիրը, «Միություն» հանդեսի և «Իրավունք» (1868) թերթի խմբագիրը, «Վասպուրական թատրոնի» հիմնադիրներից, ղեկավարներից ու առաջատար դերասաններից մեկը: Հեղինակ էր պատմական ողբերգությունների, որոնցից «Միհրդատը», «Մեծն Ներսեսը» մեծ հաջողություն են ունեցել Կ. Պոլսի և Զմյուռնիայի թատրոններում[11]:

«Տիգրան» օթյակի երևելի դեմքերից էին Մեսրոպ Նուպարյանի մորեղբայրները՝ զմյուռնահայ տպարանատեր-հրատարակիչներ, թարգմանիչներ Հարություն (1832-1868), Կարապետ (1822-1901) և Ստեփան (1823-1906) Տետեյան եղբայրները: Նրանցից «մեծ եռանդ և մտաւորական գործունեութեան մը վարիչ ըլլալու գաղափարով առլեցուն քսանամյա պատանի»[12] Հարություն Տետեյանի նախաձեռնությամբ և իր եղբայրների աջակցությամբ հիմնադրված տպարանը գործել է շուրջ 40 տարի՝ դառնալով «ամէնէն օգտակարն ու յարատևը»[13]: «Մեծ տպագրապետ և արևմտեան հայոց ամենամեծ հրատարակիչ»[14] Տետեյան եղբայրների անունը անխզելիորեն կապված է իրենց տպարանում հրատարակված «Արփի Արարատյան», «Ծաղիկ» հանդեսների, 208 հատոր գրականության, դասագրքերի և ձեռնարկների հետ: Տետեյան եղբայրներն իրենց բեղմնավոր գործունեությամբ մեծ ծառայություն են մատուցել նաև թարգմանչական գրականությունը՝ տպագրելով Վ. Հյուգոյի, Ա. Դյումայի, Ա. Լամարթինի և եվրոպական բազմաթիվ այլ մասոն հեղինակների, ինչպես նաև զմյուռնահայ մասոններ Մ. Մամուրյանի, Գ. Չիլինկիրյանի, Մ. Նուպարյանի անգլերենից և ֆրանսերենից թարգմանությունները[15]: Դրանցից շատերը հայերեն առաջին թարգմանություններ են: Մեսրոպ Նուպարյանի

---

[1] Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. Առաջին, Ե., 1963, էջ 314, 315:
[2] «Հանդէս ամսօրեայ», Վիէննա, 1887 նոյեմբեր, թիվ 11, էջ 173, 174:
[3] Շարասան, Թուրքահայ բեմը և իւր գործիչները, Կ.Պոլիս, 1914, էջ 13:
[4] «Արշալույս Արարատյան», 1864, թիվ 726:
[5] Նույն տեղում, թիվ 732:
[6] «Հայրենիք» ամսագիր, 1937, մայիս, թիվ 7, էջ 131:
[7] Շարասան, նշվ. աշխ., էջ 24, «Բազմավեպ», 1936, օգոստոս-դեկտեմբեր, էջ 256:
[8] «Հանդէս ամսօրեայ», 1887, նոյեմբեր, թիվ 11, էջ 173:
[9] «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 81:
[10] Տե՛ս Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 69:
[11] Տե՛ս Ստեփանյան Գ. Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատոր առաջին, Ե., 1963, էջ 162, 203, 204:
[12] Ալպոյաճեան Ա., Զմյուռնիո տպարանները, էջ 81:
[13] Զարդարեան Վ., Յիշատակարան, առաջին հատոր, էջ 47-48, Ասատուր, նշվ. աշխ., էջ 192; Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 81:
[14] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 81:
[15] Տե՛ս Նուպարեան Մ., Տիգրան Հարություն Տէտէեան, «Արևելյան մամուլ», 1901, մարտի 1, թիվ 5, էջ 192,

բնութագրմամբ՝ «Արևմտեան Հայոց ամենէ արդիւնաւոր հրատարակիչ… հայ գրական տարեգիրներու մէջ իր անուեն անմահացրած»[1] Հարություն Տետեյանը հրատարակչական գործից զատ գրել է բանաստեղծություններ, թարգմանել և «Արփի Արարատյանում» տպագրել Ա. Դյումայի, Ժ. Բ. Մոլիերի, Ք. Շմիդտի և այլոց ստեղծագործությունները[2]: 1868 թ. երիտասարդ հասակում իր մահկանացուն կնքած Հարություն Տետեյանի հրատարակչական գործը շարունակած Կարապետ Տետեյանը թարգմանել է Ու. Շեքսպիրի և Ժ. Բ. Մոլիերի ստեղծագործությունները, հրատարակել «Դիմակ» պարբերականը: Ստեփան Տետեյանը թարգմանել է ֆրանսիական լուսավորիչ Ժան-Ժակ Ռուսոյի աշխատություններից, զբաղեցրել պատասխանատու պաշտոններ: Նա Փարիզում և Լոնդոնում թուրքական դեսպանության թարգմանիչն էր, Զմյուռնիայի գավառական և քաղաքային ժողովների, տնտեսական և ուսումնական խորհուրդների անդամ[3]:

«Տիգրան» օթյակի ճանաչված դեմքերից էր հայտնի գործարար Տիրան էքիզյանը: Նա առևտրական կապեր ուներ Լոնդոնում, Մանչեսթրում և Մոսկվայում: Զբաղվում էր պղնձի վաճառքով, «Բակիր Բեզիստեն» ընկերության սեփականատերն էր, ուներ հսկայական անշարժ գույք, այդ թվում՝ երկու հյուրանոց, ձիթապտղի ընդարձակ դաշտեր[4]: Նրա որդի Հակոբ էքիզյանը (1873-1930) սովորել էր Սանկտ Պետերբուրգի արվեստի ակադեմիայում, Հայաստանի Ազգային պատկերասրահին նվիրել է մոտ 30 բարձրարժեք կտավ[5]:

«Տիգրան» օթյակի կարևոր դեմքերից մեկը զմյուռնահայ հայտնի մեծահարուստ, գրականության մեկենաս, մտավորականների և արվեստների պաշտպան Կարապետ Արապյանն էր[6]: «Անբավ հարստության» տեր Կ. Արապյանը Զմյուռնիայում 1895թ. Սբ. Ստեփանոսի եկեղեցու պարտեզում իր միջոցներով կառուցեց ուսումնական արհեստանոց[7]: «Տիգրան» օթյակին 1866թ. անդամագրվեցին առևտրական լայն կապեր ունեցող վաճառականներ Մկրտիչ էքիզյանը, Մարուքե Ֆրինգյանը, Հարություն Եսայանը, Գևորգ Աղաբեկյանը[8]: Այս օթյակի անդամ էին նաև փաստաբան Հարություն Ահարոնյանը, բժիշկ Թյուրապյանը, Կ. Պոլսի «Սեր» օթյակի անդամ Սիմոն Մաքսուտ բեյի եղբայր Սեպուհ Մաքսուտ բեյը, Հովհաննես Միրզայանը, Գևորգ Փափազյանը, Սերովբե Հակոբյանը և ուրիշներ[9]:

«Տիգրան» օթյակը մինչև 1876 թ. պարբերաբար հավաքույթներ էր անցկացնում յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթ օրը՝ մասոնական սկզբունքներով քննարկելով քաղաքական, մշակութային և զմյուռնահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող բազմաթիվ հարցեր: Օթյակը համագործակցում էր Կ. Պոլսում և Զմյուռնիայում գործող այլ օթյակների հետ, եղբայրական հարաբերություններ հաստատում, ընդունում օտար հյուրեր, երբեմն էլ բարձրաստիճան ազատ որմնադիրներ:

1875թ. «Տիգրան» օթյակում հյուրընկալվել է դեպի Հնդկաստան ճանապարհորդություն կատարող արքայազն Ուելսցին՝ Անգլիայի ապագա թագավոր Էդուարդ 7-րդը (1841-1910), ով «Անգլիայի Մեծ Օթյակի» Մեծ Վարպետն էր[10]: «Տիգրան» օթյակի Գերհարգելի Վարպետը նրան մասոնական պատշաճ արարողակարգով ընդունելության է արժանացրել, որին մասնակցել են հայ, անգլիացի և իտալացի մասոններ: Երեկոյան

---

[1] «Արևելյան մամուլ», 1901, հունվարի 1, թիվ 1, էջ 24:
[2] Տե՛ս նույն տեղում, 1901, փետրվարի 1, թիվ 3, էջ 99:
[3] Տե՛ս Հակոբյան Մ. Ն., Զմյուռնահայ պարբերական մամուլը (14839-1860 թթ.), Ե., 1984, Ճինգոզյան Կ. Հ., էջեր XIX դարի 50-60-ական թվականների զմյուռնահայ գրական շարժման պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», 1982, թիվ 2, էջ 61-71:
[4] Տե՛ս Dedeyan (Prince Christian) Les Dedeyan, Saint Lazare-Venise, 1972,p. 40.
[5] Տե՛ս Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 69-70:
[6] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1955, փետրվար, թիվ 2, էջ 82:
[7] Տե՛ս Քոսեան Հ. Հակոբ, Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, Վիեննա, հ. 1, 1899, էջ 289:
[8] Տե՛ս Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 70:
[9] Տե՛ս «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 82-83, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 73-75:
[10] Տե՛ս Морган П. Секреты масонов. Пер. с. анг. М., 2008, с. 76, Ридли Дж., Указ. соч., с. 317-320, Карпачев С. Указ. соч., с. 478.

արքայազնի պատվին խնջույք է կազմակերպվել, որի ժամանակ Վարդան Փափազյանը նրա համար հայկական երգ է կատարել: Արքայազնը գոհունակություն է հայտնել իրեն ցուցաբերած ջերմ ընդունելության և հայախոս օթյակի գործունեության կապակցությամբ[1]:

Գործունեության առաջին 12 տարիների ընթացքում «Տիգրան» օթյակը «ոսկեդար մը ունեցած է իր աշխատութեանց ընթացքին»[2]: Սկսած 1876թ. , երբ Թուրքիայում իշխանության եկավ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, քաղաքական նոր իրողության պայմաններում «Տիգրան» օթյակը հնարավորություն չունեցավ նախկին ակտիվությամբ գործել և վերջնականապես դադարեցրեց իր գործունեությունը 1894 թ. հունիսի 6-ին[3]: Հայ մասոնության պատմության մեջ «Տիգրան» օթյակը ամենաերկար կյանք ունեցած օթյակն էր, որը գործել է 30 տարի: Նրա փակումից հետո Զմյուռնիայում այլևս հայկական մասոնական որևէ նոր օթյակ չհիմնվեց: Մինչ այդ, 24 տարի կանոնավոր աշխատելուց հետո, 1890 թ. դադարեց գործել Կ. Պոլսի հայկական «Սեր» օթյակը, որը «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի Գերագույն խորհրդի անդամ Լուի Ամիաբլի հորդորով և օթյակի որոշմամբ վերջնականապես փակվեց 1894 թ. սեպտեմբերի 17-ին[4]:

Հայկական օթյակների փակումը պայմանավորված էր սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի Թուրքիայում հաստատած ներքաղաքական նոր իրադրությամբ: Չնայած ծայրահեղ բարդ և հակասական բնավորությանը[5]՝ սուլթանը վարում էր չափազանց ճկուն ներքին ու արտաքին քաղաքականություն: Քրիստոնյա ժողովուրդների տևական ազգային-ազատագրական պայքարը դադարեցնելու, «Թուրքիան եվրոպականացնելու»՝ մեծ տերությունների ու «նոր օսմանների» շարժման պահանջները կատարելու և Օսմանյան տերությունը լիակատար կործանումից փրկելու նպատակով[6] Աբդուլ Համիդը 1876 թ. դեկտեմբերի 23-ին սահմանադրություն «շնորհեց»: Չնայած դրան՝ նա կայսրությունում կատարյալ բռնապետական կարգ հաստատեց, որից տուժեց ամենից առաջ արևմտահայությունը: 1890թ. ամռանը նախապատրաստած հայկական կոտորածների ծրագիրը[7] «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդ 2-րդը[8] իրականացրեց 1894-1896 թթ. , որին զոհ գնաց նվազագույնը 300 հազար մարդ[9]:

Այս պայմաններում հայկական մասոնական օթյակների գործունեությունը դարձավ անհնար: Զմյուռնահայ մասոնությունը թեև գործեց ընդամենը 30 տարի, սակայն նկատելի հետք թողեց հայ համայնքի հասարակական, քաղաքական, մշակութային և կրթական կյանքում: Նրանք ձգտում էին հայության մեջ սերմանել համերաշխություն, մարդկային և ազգային բարի զգացմունքներ, վերացնել ստրկամտությունը, տարածել եվրոպական լուսավորության, առաջընթացի և բարեփոխումների գաղափարը: Զմյուռնայի ազատ որմնադիրները չնայած գերագնահատում էին բարոյագիտական գաղափարների ուժը, և այս առումով զերծ չմնացին օսմանյան իրականության գաղջ մթնոլորտը փոխելու, հանրային հոռի բարքերը վերացնելու որոշակի պատրանքներից, այնուամենայնիվ հավատարիմ մնացին մասոնական գաղափարախոսության սկզբունքներին և «ազատություն, հավասարություն, եղբայրություն» նշանաբանին:

---

[1] Տե՛ս «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 81:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 73, «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 81, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 162:

[4] Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 75, «Հայրենիք», 1955, ապրիլ, թիվ 4, էջ 101, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ, էջ 171-172, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 107:

[5] Տե՛ս Arminius W., Personal Recollections of Abdulhamid and his cout, Nineteenth Century, London, 1909, p. XVII

[6] Տե՛ս Luke sir Harry, The Making of Modern Turkey. From Bizantium to Angora, London, 1936,p. 123.

[7] Տե՛ս Макколь М., Ответственность Англии перед Арменией. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, с. 158.

[8] Աբդուլ Համիդին «կարմիր սուլթան» առաջին անգամ անվանել է ֆրանսիացի պատմաբան Ալբեր Վանդալը 1897 թ. փետրվարի 2-ին, Փարիզի Աշխարհագրական ընկերությունում կարդացած հրապարակային դասախոսության ժամանակ: Տե՛ս Ալբեր Վանդալ, Հայերը և բարենորոգումները Թուրքիայում: Առաջաբանը և ֆրանսերենից թարգմ. Վ. Պողոսյանի, Ե., 2001, էջ 4:

[9] Տե՛ս «Հայոց պատմություն», հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 542:

Феликс Мовсисян, МАСОНСТВО СРЕДИ АРМЯН СМИРНЫ В XIX ВЕКЕ. Первые контакты армян, проживающих на территории Османской империи, с масонством имеют довольно давнюю историю и относятся к первой половине 18 века. Согласно майской публикации в лондонской газете «Saint Jame's Evening Port» от 1738 г., масонские ложи в Смирне были открыты раньше, чем в Константинополе. В феврале 1748 г. в Смирне английскими негоциантами, распространявшими масонские идеи среди христианского населения, была создана масонская ложа.

В период второго этапа Танзимата в Турции открылись новые перспективы для распространения масонских идей и создания лож. Предоставленными Танзиматом возможностями первыми воспользовались армяне, которые начали расчищать дорогу для достижения своих национальных, общественных и религиозных целей. Одним из их шагов в этом направлении стало создание масонских лож в Смирне. В ноябре 1859 г. при участии видного западноармянского масона Серовбе Азнавура была открыта англоязычная ложа № 806 «Гомер». Через два года С. Азнавур стал Великим Надзирателем этой ложи. В марте 1861 г. была открыта ложа № 896 «Победа» («La Victorie»), основателями которой были члены ложи «Гомер». В 1860-ые гг. армяне Смирны вступали в ряды лож № 952 «Святой Иоанн» («Saint John's»), № 1015 «Святой Георгий» («Saint George's») и «Сион» («Sion»).

27 апреля 1864 г. в Смирне при непосредственном участии С. Азнавура была основана первая в истории армянского масонства армяноязычная ложа № 1014 «Тигран». В эту ложу вступали многие пионеры интеллектуального возрождения из числа армян Смирны, среди них: известные редакторы-публицисты Матеос Мамурян, Григор Чилинкирян, Гукас Палтазарян, переводчик Месроп Нупарян, знаменитые актеры Степан Экшян, Саркис Ванандеци. Крупными деятелями ложи «Тигран» были также владельцы типографии и издатели братья Тетеяны, предприниматели Тиран и Мкртич Экизяны, Карапет Арапян и многие другие известные врачи, адвокаты и коммерсанты. В истории армянского масонства ложа «Тигран» просуществовала дольше всех: она действовала 30 лет и была закрыта в период правления султана Абдул-Гамида II, который начал проводить политику массового истребления западноармянского населения.

Ключевые слова: масонство, Смирна, реформы, Танзимат, «Гомер», «Тигран», ложа, национальный деятель, публицист, интеллигент, негоциант.

Feliks Movsisyan, ARMENIAN MASONRY IN SMYRNA IN THE XIX CENTURY. The first links of the Armenians living in the Ottoman Empire with masons have quite a long history and refer to the first half of the 18th century. According to May edition of London newspaper "Saint Jame's Evening Port" in 1738, Masonic lodges were set up in Smyrna earlier than in Constantinople. In February 1748, the English merchants set up a lodge in Smyrna to spread the idea of masonry among Christians.

The second phase of the Tanzimat opened new perspectives for spreading the ideas of masonry in Turkey and creating lodgings. Armenians were the first to make use of the advantages provided by the Tanzimat for paving the way for their national, social and religious affairs.

One of their steps in that direction was the creation of Masonic lodges in Smyrna. In November 1859, "Homer", the English-speaking house No. 806, was established with the participation of the prominent Armenian mason, Serovbe Aznavour. Two years later, Aznavour became the Great Controller of the Lodge. In March 1861, the House No. 896 "Victory" ("La Victorie") was founded, the founders of which were members of "Homer"

Lodge. In the 1860s, the Armenians of Smyrna joined lodges “Saint John's” No. 952, “St. George's” No. 1015, and “Zion (Sion)”.

On April 27, 1864 in Smyrna, by the direct initiative of S. Aznavour the first Armenian speaking lodge No. 1014 “Tigran” was founded in the history of Armenian masonry. Many Armenian intellectuals joined the lodge, among them famous editors-publishers Matteos Mamuryan, Grigor Chilinkiryan, Ghukas Paltazaryan, translator Mesrop Nuparyan, famous actors Stepan Ekshyan and Sargis Vanandetsi. Among the prominent figures of lodge "Tigran" were publishers Teteyan brothers, businessmen Tiran and Mkrtich Eskiyans, Karapet Arapian, as well as well-known doctors, lawyers and merchants. In the history of Armenian masonry "Tigran" Lodge is the longest-living lodge, which functioned for 30 years and was closed because of the massacres of the Western Armenians carried out by Sultan Abdul Hamid II.

Key words: masonry, Smyrna, a reform, “Homer”, “Tigran”, a Lodge, a national figure, a publicist, an intellectual, a merchant.